ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՇԱՏԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Թիվ 7811-21
«26» ապրիլ 2018թ.

Թիվ 38-21
«26» ապրիլ 2018թ.

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ
ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետը,

հաշվի առնելով Պետական եկամուտների կոմիտեի կողմից Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Արտաշատի պահպանության բաժնին հանձնված ք. Երևան, Արշակունյաց պողոտա, շենք 127/21 հասցեում գտնվող Արարատյան մաքսատուն-վարչության ՄՁ թիվ 2 բաժնի պահպանությունը կամ այդ տարածքում հասարակական կարգն ապահովելու նպատակով ձեռք բերված փոխադարձ համաձայնությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Արտաշատի պահպանության բաժնին /այսուհետ՝ Կատարող/ իրականացնել Պետական եկամուտների կոմիտեի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից իրեն հանձնված օբյեկտի պահպանությունը կամ ապահովել այդ տարածքում հասարակական կարգը, ինչի նպատակով՝

1) ձևավորել ոստիկանության ռազմականացված կամ ոստիկանական կայուն ծառայություն,

2) պահպանությունն իրականացնել 24 ժամյա ռեժիմով,

3) կազմակերպել և ապահովել Պատվիրատուի կողմից իր պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների հուսալի պահպանությունը հափշտակումներից և վնասումից,

4) ապահովել պահպանիչ-հակահրդեհային և տագնապի ազդարարման համակարգի սարքի և սարքավորումների հուսալի և անխափան աշխատանքը,

5) ապահովել Պատվիրատուի տարածքում պահպանություն իրականացնող ծառայության աշխատակիցների պատշաճ արտաքին տեսքը,

6) ապահովել Պատվիրատուի կողմից հատկացված կապի միջոցների, այդ թվում՝ ծառայողական գույքի նպատակային օգտագործումը,

8) պահպանել վարվեցողության ներքին կանոններ աշխատակիցների հետ:

2. Պատվիրատուին՝

1) օբյեկտի պահպանության կամ նրա տարածքում հասարակական կարգի ապահովման համար Կատարողին վճարել վճար, որը կազմում է 1.400.000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ,

2) պահպանության վճարի վճարումները կատարել ամեն ամիս՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ,

3) ստեղծել անհրաժեշտ պայմաններ օբյեկտի պահպանությունը կամ նրա տարածքում հասարակական կարգի ապահովումն ըստ պատշաճի կատարելու համար /փակել, կնքել/,

4) աշխատանքի ավարտից հետո աշխատասենյակների դռները, դրամապահուստները կապարակնքել և հանձնել օրվա ոստիկանական վերակարգին,

5) անվճար Կատարողին հատկացնել ծառայական և օժանդակ շինություններ, գույք, ինչպես նաև մատուցել կոմունալ անվճար ծառայություններ,

6) առողջության համար վնասակար պայմաններում ծառայություն մատուցող Կատարողի աշխատակիցների համար ապահովել օբյեկտի աշխատակիցների համար նախատեսված հավասար արտոնություններով,

7) սույն հրամանի գործողության դադարեցման դեպքում 5 օրյա ժամկետում, փաստացի մատուցված ծառայության դիմաց ապահովել վարձավճարի մարումը, ինչպես նաև պահպանության դադարեցման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը:

3. Սահմանել, որ Կատարողը՝

1) պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին օբյեկտի պարիսպը, շենքերի պատերը, պահատեղերը քանդելու, դռները, լուսամուտները, ցուցափեղկերը, դրանց փականներն ու կողպեկները կոտրելու միջոցով կատարված հափշտակությամբ, գույքի ոչնչացմամբ կամ հրկիզմամբ:

2) պատասխանատվություն չի կրում տարերային աղետների հետևանքով պատճառված նյութական վնասի, բանդիտային կամ ավազակային հարձակման հետևանքով պատճառված վնասի,ինչպես նաև այն նյութական արժեքների ամբողջության համար, որոնք չեն գտնվում փակ շինություններում և սահմանված կարգով իրեն պահպանության հանձնված չեն եղել:

4. Կատորողին և Պատվիրատուին՝

1) գողության կամ այլ ոտնձգության հետևանքով Պատվիրատուի գույքի հափշտակման, ոչնչացման կամ վնասման, ներառյալ հրկիզման դեպքում կատարել օբյեկտի համատեղ գույքագրում և պատճառված վնասի հաշվարկ: Միակողմանի կատարված գույքագրումը կամ վնասի հաշվարկն իրավաբանական ուժ չունի,

2) նյութական վնասի հատուցման մասին պահանջը քննարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետով,

3) սույն հրամանի գործողության ընթացքում միմյանց միջև ծագած հարցերն ու տարաձայնությունները լուծել փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, տարածվում է 23.02.2018 թվականից ծագած հարաբերությունների նկատմամբ: Եթե պայմանագրի ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ

կողմերից ոչ մեկը չի պահանջում լուծել, այն համարվում է շարունակելի և ուժի մեջ է մնում նախկին պայմաններով և ժամկետով:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013, Հ/Հ 900013202016,
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ _____
(ստորագրություն)Կ.Տ

ՀՀՈ ՊՊԳՎ Արտաշատի պ/բ
Ք.Արտաշատ, Թումանյան 20
Հ/Հ 900413107013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 04202044
Հեռ. /0235/ 2-17-10
Արտաշատի պ/բ-ի պետ, գնդապետ

Ա.ԲԱՇՐԱԹՅԱՆ _____
(ստորագրություն)Կ.Տ